*Որակավորված թարգմանիչ*
*Տրված՝ 20 Դեկտեմբերի 2024*

# ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՍԵՐՏԻՖԻԿԱՏ

Ք. Երևան

2024թ. դեկտեմբերի 20

Ես՝ Անահիտ Զաքարյանս, սույնով հավաստում եմ, որ

(ա) հանդիսանում եմ անգլերենից հայերեն թարգմանություն իրականացնող թարգմանիչ՝ որակավորված Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից,

(բ) թարգմանել եմ սույն սերտիֆիկատին կցվող փաստաթուղթը 2024թ. դեկտեմբերի 20-ին, և

(գ) իմ խորին գիտությամբ կցված թարգմանությունը բնօրինակ փաստաթղթի ճշմարիտ, ճշգրիտ և ամբողջական թարգմանությունն է, որն ինձ տրամադրվել է:

Անահիտ Զաքարյան

*Թարգմանված է անգլերենից, ամբողջական փաստաթղթից*

# <u>ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ</u>

Սույն Պայմանագիրը կնքված է 2005թ ապրիլի 21-րդ օրը

ՆԻՍՍԱՆ ՄՈՏՈՐ ՔՈ., ԼԹԴ.-ի,

Ճապոնիայի օրենքներին համապատասխան ստեղծված և գործող ընկերություն, որի գլխամասը գտնվում է թիվ 2 Տակարա Չո, Կանագավա- Կու, Յոկոհամա, Ճապոնիա հասցեում (այսուհետ՝ «Ընկերություն»)

և

Մուրանի

Հայաստանի օրենսդրության ներքո ստեղծված և գործող ընկերություն, որի գլխամասը գտնվում է Տիգրանյան փողոց, 1 նրբանցք, 1-ին տուն, Հայաստանի Հանրապետություն (այսուհետ՝ «Մատակարար»)

միջև

Հաշվի առնելով, որ Ընկերությունը զբաղվում է է շարժիչով տրանսպորտային միջոցների տարբեր տեսակների և դրանց մասերի մշակմամբ, արտադրությամբ և հավաքմամբ, ինչպես նաև շարժիչով տրանսպորտային միջոցների մատակարարմամբ աշխարհում,

Հաշվի առնելով, որ Ընկերությունը հանդիսանում է Տարածքում (ինչպես սահմանված է Հոդված 1-1-ում) որոշ ապրանքային նշանների և առևտրային անվանումների սեփականատեր, գրանցված կամ որևէ այլ կերպ, որոնց ներքո նշված շարժիչով տրանսպորտային միջոցները և մասերը վաճառվում են,

Հաշվի առնելով, որ Մատակարարը ցանկանում է որպես Ընկերության մատակարար Տարածքում ներմուծել, մատակարարել և սպասարկել տվյալ շարժիչով տրանսպորտային միջոցները և մասերը Ապրանքային նշանի (ինչպես սահմանված է 8-1 պարբերությամբ) ներքո, և

Հաշվի առնելով, որ Ընեկերությունը ցանկանում է նշանակել Մատակարարին որպես Ընկերության Մատակարար որոշ շարժիչով տրանսպորտային միջոցների և մասերի ներմուծման, մատակարարման և սպասարկման համար Տարածքում,

Այսպիսով Կողմերը համաձայնվում են հետևյալի մասին.

Մաս 1. Սահմանումներ

Հոդված 1. Սահմանումներ

1-1. Բացառությամբ եթե բովանդակությունից ակնհայտորեն այլ բան է բխում, հետևյալ հասկացություններ սույն Պայմանագրի իմաստով ունեն սույն Հոդվածով սահմանված հետևյալ նշանակությունը.

(a) «Տրանսպորտային Միջոց» նշանակում է նոր և չօգտագործված տրանսպորտային միջոցներ, արտադրված և/կամ շրջանառվող Ընկերության կողմից, որի մոդելները սահմանված են Հավելված Ա-ով:
(b) «Պահեստամասեր» նշանակում է մասերը և պարագաները, որոնք արտադրված են և/կամ շրջանառվում են Ընկերության կողմից Ապրանքային նշանի ներքո (ինչպես սահմանված է 8-1 պարբերությամբ), որոնք ներառված են ՆԻՍՍԱՆ ՄԱՍԵՐԻ ԿԱՏԱԼՈԳում և ենթակա են Ընկերության կողմից Տրանսպորտային միջոցների և դրանց հավելումների համար ժամանակ առ ժամանակ մատակարարման:
(c) «Ապրանքներ» Նշանակում է Տրանսպորտային Միջոցները և Պահեստամասերը:
(d) «Տարածք» նշանակում է Հայաստանի Հանրապետության աշխարհագրական սահմանները:
(e) «Անձ» նշանակում է անհատ, ընկերակցություն, ընկերություն, կորպորացիա, ասոցիացիա, կառավարություն կամ որևէ այլ իրավաբանական անձ
(f) «Դիլերներ» նշանակում է Անձինք, ովքեր նշանակված են Տարածքում Մատակարարի կողմից Ապրանքները վերավաճառելու և Տարածքում Տրանսպորտային Միջոցները սպասարկելու համար:

Վերևում թվարկված նշանակությունները հավասարապես կիրառելի են սույն Հոդվածում նշված սահմանումների եզակի և հոգնակի ձևերի համար:

Հոդված 2. Իրավունքների Տրամադրում

2-1 Սույն Պայմանագրով սահմանված պայմաններին համաձայն և սույն Պայմանագրի ժամկետով Ընկերությունը սույնով Մատակարարին տրամադրում է հետևյալ բացառիկ իրավունքները.

(a) Ընկերությունից ձեռք բերել Ապրանքները և վերավաճառել ու մատակարարել դրանք Տարածքում, և
(b) Որևէ անձի նշանակել որպես իր մատակարար Տարածքում Ընկերությունից Մատակարարի կողմից ձեռք բերված Ապրանքները վերավաճառելու և Տրանսպորտային Միջոցները սպասարկելու նպատակով:

Պայմանով, որ Պահեստամասերի նկատմամբ իրավունքները, որոնք կարող են սովորաբար օգտագործվել ինչպես Տրանսպորտային Միջոցների այնպես էլ Ընկերության այլ ապրանքների համար պետք է լինեն ոչ բացառիկ:

2-2: Անկախ Մատակարարին սույն պայմանագրի 2-1 պարբերությամբ տրամադրված բացառիկ իրավունքներից, Ընկերությունը սույնով պահպանում է Ապրանքները ստորև նշված Անձին Տարածքում ուղղակի կամ անուղղակի վաճառելու, արտահանելու և մատակարարելու իրավունքը առանց Մատակարարի և/կամ Դիլերների նկատմամբ որևէ պարտավորությունների, այնպիսի արժեքով և այնպիսի պայմաններով, ինչպես պայմանավորված է Ընկերության և որևէ նմանատիպ Անձի միջև.

a) Որևէ Անձի, ով ազատված է մաքսային վճարներից որպես հյուպատոսական կամ դիվանագիտական ներկայացուցչություն,
b) ՄԱԿ որևէ կազմակերպություն կամ դրա ենթականեր կամ դրանց անձնակազմ:

Երբ Ընկերությունը պահանջում է, որպեսզի Մատակարարը մատուցի սույն պարբերության համաձայն Ընկերության կողմից վաճառվող Ապրանքների մաքսազերծման և մինչ առաքումը ստուգման ծառայություններ, Մատակարարը պետք է մատուցի նշված ծառայությունները, և Ընկերությունը պետք է Մատակարարին վճարի դրա դիմաց՝ Ընկերության կողմից սահմանված ողջամիտ ծառայության արժեքներով:

…..

Հոդված 15 Երաշխիք

15-1 Ընկերության երաշխիքը Մատակարարին և Դիլերներին

Ընկերությունը պարտավոր է ժամանակ առ ժամանակ տրամադրել ՆԻՍՍԱՆԻ ԵՐԱՇԽԻՔԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՄԱՍԻՆ ՁԵՌՆԱՐԿՈՎ սահմանված ձևով կամ որևէ այլ ձևով երաշխիքներ, որոնք կիրառելի են սույն պայմանագրի համաձայն Մատակարարին և Դիլերներին վաճառվող Ապրանքների նկատմամբ և կարող է ժամանակ առ ժամանակ վերանայել այդ երաշխիքները: Ընկերությունը չի տրամադրում որևէ այլ երաշխիք և որևէ այլ պարտականություն չի կրում Ապրանքների վերաբերյալ: Ընկերությունը որևէ դեպքում

չպետք է պարտավորություն կրի որևէ Անձի նկատմամբ, ներառյալ՝ Մատակարարի և Դիլերների հատուկ կամ հետևանքային վնասի համար, որն առաջացել է Ապրանքների ձեռքբերումից, պահպանումից և օգտագործումից։

15-2 Մատակարարի և Դիլերների Երաշխիքը Հաճախորդներին

a) Սույն Պայմանագրով Մատակարարին կամ դրա միջոցով Դիլերներին վաճառված բոլոր Տրանսպորտային Միջոցները պետք է վերավաճառվեն Մատակարարի կամ Դիլերների կողմից հաճախորդներին Մատակարարի կամ Դիլերների կողմից տրված երաշխիքով, որի պայմանները պետք է նշվեն Նիսսան Երաշխիքի Տեղեկատվությամբ, որը պետք է կազմվի և վերանայվի ժամանակ առ ժամանակ Ընկերության կողմից և պետք է Ընկերության կողմից տրամադրվի Մատակարարին և դրա միջոցով՝ Դիլերներին։ Նիսսան Երաշխիքի Տեղեկատվությունը պետք է պատշաճ լրացված լինի և ստորագրի Մատակարարի և Դիլերների կողմից և պետք է Մատակարարի կամ Դիլերների կողմից տրամադրվի հաճախորդին Տրանսպորտային Միջոցները առաքելու պահին։
b) Եթե որևէ Տրանսպորտային Միջոց վերավաճառված է Մատակարարկի կամ Դիլերների կողմից Մատակարարի կողմից փոփոխվելուց հետո՝ 13-3 պարբերությամբ սահմանված ընկերության գրավոր համաձայնությամբ, Մատակարարը չպետք է Հաճախորդին տրամադրի, և պետք է ապահովի որպեսզի Դիլերները չտրամարդեն Նիսսան Երաշխիքի Տեղեկատվությունը, որը կիրառելի է Տրանսպորտային Միջոցի նկատմամբ՝ մինչև այդպիսի փոփոխության կատարումը։ Մատակարարը պետք է, դրա փոխարեն, իր անունով և միայն իր պատասխանատվությամբ պատրաստի և տրամադրի հաճախորդների համապատասխան բուկլետները, որոնք կներառել այդպիսի փոփոխված Տրանսպորտային Միջոցների նկատմամբ կիառելի երաշխիքները, հաշվի առնելով այդպիսի փոփոխությունը, բայց միևնույն ժամանակ Նիսսան Երաշխիքի Տեղեկատվությանն էապես նման պայմաններով։

15-3 Երաշխիքային Ծառայություններ

Մատակարարը պետք է իրականացնի և պետք է ապահովի, որպեսզի Դիլերներն էլ հետևեն և իրականացնեն Նիսսան Երաշխիքի Տեղեկատվությամբ սահմանված պայմաններին համապատասխան երաշխիքային ծառայություններ, առանց որևէ վճարի, Տրանսպորտային Միջոցների որևէ հաճախորդների համար, որոնք արտադրված են և/կամ շրջանառվում են Ընկերության կողմից՝ անկախ նրանից թե որտեղ կամ ում կողմից են վաճառվել։ Մատակարարի կամ Դիլերների կողմից առանց որևէ վճարի նման ծառայությունների մատուցման համար Ընկերությունը կվճարի

*Թարգմանված է անգլերենից, ամբողջական փաստաթղթից*

Մատակարարին կամ դրա միջոցով՝ Դիլերներին՝ ՆԻՍՍԱՆԻ ԵՐԱՇԽԻՔԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՄԱՍԻՆ ՁԵՌՆԱՐԿԻ համաձայն կամ Ընկերության կողմից ժամանակ առ ժամանակ տրամադրված որևէ այլ ուղղորդումների համաձայն։

…..

Ի հավաստումն որի, սույն Պայմանագրի կողմերը կնքեցին սույն Պայմանագիրը երկու օրինակով Անգլերեն՝ Ստորև նշված ամսաթվին իրենց լիազոր ներկայացուցիչների կողմից ստորագրելու միջոցով։

ՆԻՍՍԱՆ ՄՈՏՈՐ ՔՈ., ԼԹԴ.

/*առկա է ստորագրություն և կնիք/*
Շոիչի Միյատանի
Փոխնախագահ

ՄՈՒՐԱՆ

*/առկա է ստորագրություն և կնիք/*
Շահմուրադյան Աշոտ
Նախագահ